Հավելված

ՀՀ կառավարության 2009թվականի
.............................. ,,..........ի,,
N ..........Ն որոշման

# ՅԱՅԱՍՏԱՆԻ ՅԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴՍԵՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱ



✷ Ծանոթագրություն

① Արդյունաբերության, ընդերքօգտագործման 0.1 հա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ վարչապետի 14.10.08 թ. N 803-Ա որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի.

Հանձնաժողովը 2008 թվականի ..Դեկտեմբերի......2....-ի նիստում քննարկելով ..Հոռոմ.................... մարզի ......Շիրակ.............. համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարվող փոփոխությունների վերաբերյալ նյութերը, առաջարկում է ներկայացնել Հայաստանի Հանրապետության իրավասու նախարարությունների և գերատեսչությունների հաստատմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Ֆ. Եգորյան

անդամներ՝ Ռ. Ալավերդյան

Ս. Պապյան

Ս. Գալստյան

Գ. Գյուրջյան

Լ. Շահվերդյան

Ֆ. Բաշոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ք.Վանաձոր, Հայքի հրապարակ

Հեռ. 4-61-92
Fax 2-28-77


N. 029/2438-01

« 22 » 09 2008 թ.

ՀՀ ՏԿՆ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ
ՍԽԵՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ
ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Վ.ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տերտերյան

Ներկայացնում եմ ՀՀ Լոռու մարզի Դսեղ համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման, 7 օրինակից, քարի վերամշակման արտադրամաս կառուցելու համար հողի նպատակային նշանակությունը փոփոխելու և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՔՈՉԱՐՅԱՆ


Կատ.՝ Ռ.Քոչարյան
Հեռ. (0 322) 2-34-99

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2008թ. թիվ 199-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅԻ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2001թ. հունվարի 17-ի «Հողերի օգտագործման սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 30 որոշմամբ հաստատված կարգի, հաշվի առնելով Դսեղ համայնքի ավագանու 2008թ. ապրիլի 28-ի թիվ 13 որոշումը և ղեկավարվելով ՀՀ նախագահի 06.05.97թ. «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.15 կետի «դ» ենթակետով՝

Տալ համաձայնություն Դսեղ համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմային:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՔՈՉԱՐՅԱՆ

2008թ. հունիսի 12
ք.Վանաձոր

# ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 98

ք.Վանաձոր

16.05.2008

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅԻ ՄԱՍԻՆ

Քննարկելով համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեման Լոռու մարզպետի 16 փետրվարի 2007թ. թիվ 23 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովը որոշեց՝ Լոռու մարզի Դսեղ համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով նախատեսված գյուղատնտեսական նշանակության 0.1 հա վարելահող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների կատեգորիա փոխադրվող հողամասերի վերաբերյալ տալ դրական եզրակացություն:

Ա.Քոչարյան — հանձնաժողովի նախագահ, Լոռու մարզպետ

Հանձնաժողովի անդամներ .

Ա.Վարդերեսյան — ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ

Վ.Բունիաթյան — մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Վ.Անտոնյան — մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Ռ.Քոչարյան — մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դսեղ գյուղական համայնքի տարածքում Սուրեն Դալլաքյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.1 հա վարելահող քարի վերամշակման արտադրամաս կառուցելու նպատակով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա փոխադրելու վերաբերյալ

ՀՀ Լոռու մարզի Դսեղ գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով նախատեսնվում Դսեղ համայնքի բնակիչ Սուրեն Դալլաքյանի ընտանիքի 5 անձի համատեղ սեփականություն հանդիսացող 6050 ք.մ. վարելահողերից, ծածկագիր 125-105, 1000 ք.մ. փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ քարի վերամշակման արտադրամաս կառուցելու նպատակով: Հողամասը գտնվում է Դսեղի բնակավայրի սահմանագծից 300 մետր հեռավորության վրա, գյուղի հարավ արևմտյան մասում, ապահովված է կոմունիկացիաներով՝ մուտքի և ելքի ճանապարհով, կա ջրամատակարարման, ջրահեռացման և էլեկտրոէներգիայի մատակարարման հնարավորություն: Հողամասի սեփականատերը նշված հողամասից բացի, նույն տարածքի հարևանությամբ սեփականության իրավունքով ունի 1.387 հա վարելահող՝ ծածկագիր 125-102, որը լիովին բավական է գյուղացիական տնտեսություն վարելու համար և արտադրամասի կառուցումը չի խոչընդոտի տնտեսության գյուղգործունեությամբ զբաղվելուն: Հարկ է նշել, որ արտադրամասը նախատեսնվել է կառուցել հողամասի այն հատվածում, որի բերքատվությունը շատ ցածր է և այդ հատվածում գյուղատնտեսությամբ զբաղվելը շահավետ չէ: Արտադրամասի կառուցմամբ համայնքում կստեղծվեն նոր աշխատատեղեր համայնքի բնակիչների համար և այն կնպաստի գյուղական համայնքում փոքր և միջին բիզնեսի կայացմանը:

Սույն ժամանակավոր սխեման ներկայացվել է ՀՀ փոխվարչապետ,տարածքային կառավարման նախարար Ա.Գևորգյանի 28.08.2008թ. թիվ 16/2650-08 գրության պահանջներին համապատասխան, հաշվի առնելով համայնքի և բնակչության, ինչպես նաև այդ ընտանիքի 5 անդամների շահերը:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ և ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԲԱԺՆԻ ՊԵՏ Ռ.ՔՈՉԱՐՅԱՆ

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ՀՀ Լոռու մարզի Դսեղի գյուղական համայնքի բնակիչ Սուրեն Դալլաքյանի սեփականություն հանդիսացող վարելահողից 1000ք.մ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա փոխադրելու վերաբերյալ լրացուցիչ հայտնում եմ, որ քարի մշակման արտադրամասի աշխատանքի համար նախատեսվում է օգտագործել մոտակա առվի ջրից, պոմպի միջոցով, փակ ցիկլով՝ չի լինելու կեղտաջրերի արտահոսք:

Քարի կտրման և մշակման պրոցեսում առաջացող ջրի հետ խառնված քարի փոշին պետք է հավաքվի ավազանի մեջ նստվածքի տեսքով, որը չորանալուց հետո նախատեսվում է օգտագործել որպես շինանյութ:

էլեկտրասնուցման համար «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից տրված է տեխնիկական պայման, որի պատճեն ներկայացվում է:

Գլխավոր հատակագծում ցույց տրված էլեկտրահաղորդման գծերը գծված են սխեմատիկ, իսկ անվտանգության համար անհարժեշտ հեռավորությունը գծերից ստուգվել է տեխնիկական պայմանը տրամադրելու հետ միաժամանակ:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ և ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Ռ.ՔՈՉԱՐՅԱՆ

06.11.2008թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ»
ՓԲԸ

ЗАО
"ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ"

"ELECTRIC NETWORKS OF ARMENIA" CJSC

ՀՀ, Երևան ,Ա.Արմենակյան փող.127
Հեռ. (3742)

РА, Ереван, ул.А.Арменакяна 127
тел.: (3742)

№ ՏՊ -460-10(6)/0109
«29» 09 2008 թ.

«Արմեն և Ռուսլան եղբայրներ» ՍՊԸ
տնօրեն Ս.Ղալլաքյանին
պատճեն «Ղեբեղ» մ/ճ գլխ.ճարտարագետ
պր-ն Վ.Կամբուլյանին

Թույլատրվում է 40 կՎԱ հզորություն ՀՀ Լոռու մարզի Դսեղ գյուղում գործունեություն ծավալելու նպատակով, որի համար անհրաժեշտ է.

1. Տեղադրել ԼՏԵ 40/10 կՎԱ հզորության, համաձայն նախագծի:
2. Սնումն իրականացնել «Դսեղ» 35/10 կՎ ե/կ-ի «Դսեղ» 10 կՎ օդային գծի թիվ 3 հենարանից ճյուղավորումով, փոխարինելով ճյուղավորման հենարանը համապատասխան տիպի:
3. ԼՏԵ-ում տրանսֆորմատորի 0,4 կՎ լարման կողմում տեղադրել և օրինականացնել հաշվառքի սարքեր:
4. ճյուղավորման սկզբում տեղադրել 10 կՎ գծային բաժանիչ, եթե ճյուղավորման երկարությունը գերազանցում է 300գ.մ-ը:
5. Կառուցվող 10 կՎ օդային գծի ուղեգիծը համաձայնեցնել համապատասխան շահագրգիռ կազմակերպությունների հետ:
6. Սնուցումը կիրականացվի էներգետիկայի պետական տեսչության կողմից տրված լարման գործարկման եզրակացության, «ՀԷՑ» ՓԲ Ընկերության կողմից տրված լարման կարգադրության և մասնաճյուղի հետ կնքած առք ու վաճառքի պայմանագիր առկայության դեպքում:

Սույն տեխնիկական պայմանը տրվում է 2 տարի ժամկետով:

Տեխնիկական տնօրեն Կ.Դարբինյան

9 Կ.Տ 8

65-16-85

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

հեռ. 2 40 30

«28» 04. 2008թ.

## ՈՐՈՇՈՒՄ թիվ 13

Սուրեն Պարսամյանի Բալլաջյանի դիմումը՝ փայտի արտադրամաս կառուցելու համար սեփականության իրավունքով 0,605 հա վարելահողի 0,1 հա տարածքի նպատակային նշանակության փոփոխելու մասին

Ղեկավարվելով ՀՀ կառավարության «Հողերի օգտագործման սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» 17.01.2001թ. N 30 որոշմամբ

Ավագանին որոշում է

Տալ համաձայնություն գյուղատնտեսական նշանակության 0,605 հա (ծածկագիր 06-035-125-000105) վարելահողից 0,1 հա վարելահողը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նշանակության հողերի կատեգորիա:

Գյուղապետ [signature] Ռ. Վարդանյան

Կողմ
Դեմ չկա
Ձեռնպահ չկա

Սարգսյան [signature]
Նիկոլյան [signature]
Խաչատրյան [signature]
Համազասպյան [signature]
Պապոյան [signature]

ՀԱՏԱԿԱԳԻԾ

Դսեղ համայնքի ՀՀ քաղաքացիների սեփականություն հանդիսացող վարելահողերից 0.1 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողերի կատեգորիա փոխադրվող հողամաս

Մ 1:5000




ԴՍԵՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

Ռ.ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԴՍԵՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ՀՀ Լոռու մարզի Դսեղ գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով նախատեսնվում ՀՀ քաղաքացիների սեփականություն հանդիսացող 6050 ք.մ. վարելահողերից, ծածկագիր 125-105, 1000 ք.մ. փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ քարի վերամշակման արտադրամաս կառուցելու նպատակով: Հողամասը գտնվում է Դսեղի բնակավայրի սահմանագծից 300 մետր հեռավորության վրա, գյուղի հարավ արևմտյան մասում, ապահովված է կոմունիկացիաներով՝ մուտքի և ելքի ճանապարհով, կա ջրամատակարարման, ջրահեռացման և էլեկտրէներգիայի մատակարարման հնարավորություն: Հողամասի սեփականատերը նշված հողամասից բացի, նույն տարածքի հարևանությամբ ունի անհրաժեշտ քանակությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասեր, որոնք լիովին բավական են գյուղացիական տնտեսություն վարելու համար և արտադրամասի կառուցումը չի խոչընդոտի տնտեսության գյուղգործունեությամբ զբաղվելուն, միաժամանակ արտադրամասը նախատեսնվել է կառուցել հողամասի այն հատվածում, որի բերքատվությունը շատ ցածր է և այդ հատվածում գյուղատնտեսությամբ զբաղվելը ոչ շահավետ է: Արտադրամասի կառուցմամբ համայնքում կստեղծվեն նոր աշխատատեղեր համայնքի բնակիչների համար և կնպաստի գյուղական համայնքում փոքր և միջին բիզնեսի կայացմանը:

Համայնքի ղեկավար Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ԵՎ
ՏԱՎՈՒՇԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ

ք.Վանաձոր

հեռ.4-41-52

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Տեղազննման եզրակացություն

Լոռու մարզի Դսեղ համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով նախատեսված գյուղի հարավ-արևեյան մասում գտնվող, Դսեղ գյուղի սահմանից, դեպի արևելք՝ 300 մետր հեռավորության վրա, 125-105 ծածկագրի ՀՀ քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 1000 ք.մ վարելահող, արտադրամաս կառուցելու նպատակով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա փոխադրվող հողամասերում իմ կողմից կատարվել է տեղազննություն, որի արդյունքում պատմության և մշակույթի հուշարձաններ չեն հայտնաբերվել:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ԵՎ
ՏԱՎՈՒՇԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ — Հ.ԽԵՉԻԿՅԱՆ
12.06.2008թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Լոռու մարզ
Դսեղի գյուղապետարան

ՀՀ Լոռու մարզ. գ. Դսեղ ☎ (0253) 23040

«06. 05» 2008թ.

պ. Ռ. Քոչարյան 15.05.08

Լոռու մարզպետ պարոն Ա.Քոչարյանին

Հարգելի պարոն Քոչարյան

Ներկայացվում է Դսեղ համայնքի գյուղատնտեսական նշանակության 0.605հա (ծածկագիր 06-035-125-00105) վարելահողից 0.1 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա փոխելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը:

Խնդրում եմ օրենքով սահմանված կարգով ընթացք տալ նշված հողակտորի նպատակային նշանակության փոփոխությանը:

Գյուղապետ Ռ. Վարդանյան

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
15 05 08
Մուտք 200/2840

Լոռու մարզի Դսեղ գյուղի գյուղապետ
պարոն Ռ.Վարդանյանին
Քաղաքացիներ՝ Սուրեն Դալլաքյանից
Կարինե Եղիկյանից
Նոնա Դալլաքյանից
Նելլի Դալլաքյանից
Ռուսլան Դալլաքյանից

Դիմում

Դսեղ գյուղի տարածքում ունենք 0.605 հա սեփական վարելահող (կադաստրային համարը 06-035-125-000105):

Վերը նշված տարածքից 0.1 հա տարածքում ցանկանում եմ կառուցել քարի արտադրամաս:

Խնդրում եմ Ձեր միջամտությունը ինձ սեփականության իրավունքով պատկանող 0.605հա գյուղատնտեսական նշանակության հողամասից 0.1հա տարածքի նպատակային նշանակությունը փոխելու հարցում:

Կից ներկայացվում է թիվ 2284408 անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի կրկնօրինակը:

Դիմողներ՝ Ս.Դալլաքյան
Կ.Եղիկյան
Ն.Դալլաքյան
Ն.Դալլաքյան
Ռ.Դալլաքյան

23. 04. 2008թ.